— Վարակոե՛լ է թշոառականը... — ասաց քեռի Պետրոսը գլուխը շարժելով: — Այսպէս կարող է խօսել միայն ծերունի որսորդի յառաջադէմ աշակերտը:

— Ուղիղ է, ես առաջ այսպէս չէի մտածում, ես կարծում էի, թէ աստուած հային ստեղծելու ժամանակ նրա ճակատին գրել է, որ նա միշտ խեղճ լինի, օտարի ձեռքի տակ գերի լինի, ինքն աշխատէ եւ ուրիշին ուտացնէ, գլխին ծեծէն լուռ կենայ, երեսին թքեն՝ լուռ կենայ, մի խօսքով, աշխարհի բոլոր անպատուութիւններին պէտք է համբերէ նա: Բայց հիմա ես հասկանում եմ, որ աստուած չէ ցանկանում, որ հայը թշոառ լինի, եւ եթէ նա թշոառ է, ինքն է պատճառը...

— Դու վարակոել ես...խե՛ղճ տղայ, — պատասխանեց քեռի Պետրոսը ցաւակցական եղանակով: — Դրանք այն երեւելի աւազակապետի (ծերունի որսորդի) խօսքերն են, որ դուրս են թափւում քո բերանից: Դրանք այն «հին գայլի» խօսքերն են, որի համար ադամորդու կեանքը մի ճանճի կեանք է, որն իր գլխի մազերի համբարքով մարդիկ է կոտորել, որը հազարաւոր տուներ է քանդել, որի սիրտը գութ եւ խիղճ կոչուած բաների հետ երբեք ծանօթ չէ եղել:

Վերջին խօսքերն աւելի զայրացուցին ինձ, նրանք խիստ կեղտոտ հայհոյանք էին մի մարդու դէմ, որն այնքան բարեսիրտ էր եւ մեծահոգի, որը թշոառի հայր էր եւ կ'արօտեալի բարերար: Նա պատրաստ էի իսկոյն վեր թռչել, բռնել քեռուս կոկորդից եւ խեղդել նրան, բայց մի յանկարծակի այցելութիւն արգելեց իմ կատաղութեանը :

— Ողջոյն, — լսելի եղաւ մեր ետեւից, եւ վրանի մէջ յայտնուեցաւ իմ վարժապետը — տէր Թոդիկը:

— «Անառակ որդինէ երեւաց, — ասաց նա ինձ տեսնելով: — Բայց արդեօք զղջացե՞լ է նրա սիրտը:

— Ընդհակառակն, աւելի խստացել է, — պատասխանեց քեռի Պետրոսը:

Ես լուռ էի:

Տէրտէրը եկաւ նստեց:

Քեռի Պետրոսը մասնաւորապէս պատմեց նրան այն վիճաբանութիւնը, որ անցել էր մեր մէջ, եւ խիստ սեւ գոյներով նկարագրեց իմ յամառութիւնը եւ մոլորութիւնը:

Տէրտէրը իր յատուկ կրօնական փիլիսոփայութեամբ սկսեց կշտամբել իմ ցնորքները, ասելով.